

<<ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԵՎ
<<ՎԱՐԴԵՆԻԿԻ ԱԿ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐՍՏՈՒԳՈՂՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ մայիսի 19-ի N 1187-Ն որոշման 2-րդ կետի ,,բ,, ենթակետը ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006 թվականի մայիսի 3-ի հրամանով հաստատված ,,Պետական բաժնեմասի (բաժնետոմսերի) կառավարման լիազորված մարմինների կողմից 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողների) ընտրության մրցույթային հանձնաժողովի ձևավորման, մրցույթի անցկացման ու մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջների (չափանիշների) մասին,, կարգի 1.6-րդ կետը

որոշում եմ՝

1. Ս/թ նոյեմբերի 3-ին նշանակել և անցկացնել <<Վարդենիսի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական և <<Վարդենիկի ԱԿ >> փակ բաժնետիրական ընկերությունների վերստուգողների թափուր պաշտոնների համար բաց մրցույթ:
2. Մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնին /բաժնի վարիչ՝ Ն.Մաթևոսյան/ սահմանված կարգով կազմակերպել մրցույթի անցկացման նախապատրաստական աշխատանքները:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլիլայանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն.ՊՈՂՈՍՅԱՆ